Նրան ընդդէմ ազգային լուսաւորութեան, զզուանք բերել գործող անձինքների վրա։ Դրանք աննշմարելի ցեցերն, որ ուտում են ժողովրդին. ի՞նչ է արդեօք նրանց նպատակը. երևի կամենում են գրաւել ժողորդի սէրը այդպիսի միջոցներով. որպէս զի հեշտութեամբ կարողանան ձեռք բերել իրենց ցանկացած կոպէկները. բայց չեն հասկանում, որ մի և նոյն ժամանակը խայտառակում են իրենց անձը, և հրապարակ հանելով իրանց հոգեկան հիւանդոտ և տգեղ պատկերը, երկպառակութիւն, խռովասիրութիւն, շահախնդրութիւն և այլ զանազան ապականիչ ախտեր են տարածում ժողովրդի մէջ։

Թող ներուի ինձ ասելու, որ մինչև ցայսօր իրանց նիւթական շահերին ծառայեցրին խեղճ ժողովրդին, կերան նրա արդիւնքը և արդար վաստակը, սպառեցին և մաշեցին նրա բարոյական ուժը, զրկեցին նրան ազգային գեղեցիկ յատկութիւններից, պառաւական յիմար ցնորաբանութիւններով զբաղեցրին ժողովրդի միտքը. իսկ քրիստոնէական և կրօնի ճշմարտութիւնը մեքենայաբար հաղորդեցին ժողովրդին։ Կրօնը արեցին իրենց դեկը և շինեցին իրենց համար ապրուստի գործիք, իսկ Քրիստոսից առ մեզ աւանդված նուիրական սուրբ տաճարը համարեցին իրենց համար առուտուրի կրպակներ և խանութներ, այնպէս որ, սիրտ ուզած միջոցին կարող են անօթեղէնները ծախել և կամ գողանալ ասելով թէ „հանաք եմ անում". զարմանալի հանաք։

Ղարսից այդպիսի մի քանի նամակներ գրել են, որ տեղւոյն ծխական քահանաները սառնասրտութեամբ են վերաբերվում դպրոցին, փոխանակ քաջալերելու, վհատեցնում են, փոխանակ օրհնելու, անիծում. երբ իրենց վրա ամենից մեծ պարտականութիւն կայ դէպի այդ պաշտելի տունը և տաճարը։ Այդպիսի ընթացքը և գործունէութիւնը ամեն մի ստորին դասակարգի մարդկանց համար աններելի մեղք է, ո՜ւր մնաց մի հոգևորականի, Աստուծոյ առաջը ժողորդի կողմից պատասխատու մի անձի, ո՛ր իր պարտականութիւնը դէպի չարն է գործ դնում։ Ժամանակը փոխվել է. ամեն մարդ պէտք է իր կարողութեան չափով օգնէ ազգային ազնիւ գործին, որից չը պէտք է բացառութիւն կազմի ոչ հարուստ, ոչ աղքատ, ոչ տղա և մշակ, ոչ աշխարհական և ոչ հոգևորական, այդ է մեզ ուսուցանում ազգային պարտքը։ Ընդհակառակն այնպիսիներն արժանի են միայն արհամարանքի։

Այո, և այն չենք ուրանում, որ տեղւոյն դըպրոցը աննախանձելի դրութեան մէջ է շնորհիւ մի քանի ծոյլ և անփորձ ուսուցիչների, որոնք գործում են ոչ ոքի հսկողութեան տակ, ուտում, խըմում, քէֆ անում, օգուտ քաղելով տեղական առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի հինգ ամսեայ բացակայութիւնից։ Այդպիսիներին ոչ մարդկութեան և ո՛չ էլ Աստուծոյ դատաստանը կարդարացնի, որոնց վարձատրութիւնը կը լինի միայն թուք և ամօթանք։

Ց. Տ. Բ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

3 մայիսի

Շտապում եմ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին այն մխիթարական երևոյթի հետ, որի տպաւորութեան ներքոյ ես գրում եմ ներկայ տողերը։ Ո՜րքան զանազանութիւն իմ վերջին նամակիս (15 մարտի) և սրա հետ։ Այն ժամանակ մարդկանց և անասունների քաղցածութեան նկարագիրները, ձիւնապատ դաշտերը, հացի օրըստօրէ թանգանալը մի տեսակ սարսափ էին բերում մարդի վրա, բայց այժմ բարեյաջող անձրևների պատճառով խոտը բաւականին առատ է և յոյս կայ որ ներկայ տարվայ հունձքը ևս առատ կը լինի։

Ի հարկէ, դեռ վաղ է ուրախանալը. առատ լինի, թէ չը լինի հացի բերքը, այնուամենայնիւ ներկայ տարվայ սարսափելի թշուառութիւնների տըխուր յիշատակները ջնջելու և հասարակական բարօրութիւնը վերականգնելու համար հարկաւոր են տարիներ, բայց ինչ և իցէ հացի գինը մեր հրապարակի (մէյդան) վրա հետզհետէ իջնում է։

Երկու շաբաթվայ մէջ ցորենի սոմարը, որ 70 րուբլով էր ծախվում, իջաւ 50—55 րուբլի, մինչև անգամ երէկ Ախալցխայի գաւառից բերված աշունքացան ցորենի սոմարը ծախվեցաւ այստեղ 35 րուբլով։

Այժմ երբ փոքր առ փոքր սկսելու ենք ազատ օդ շնչել, չենք կարող շնորհակալութիւն չը յիշել մեր քաղաքում կազմված աղքատաց խնամատար ընկերութեան անդամներին, որոնք սկզբից հարց բարձրացրին հասարակութեան փողով հաց գնել, այդ գումարի մեծ մասը իրանք տուին և անձնուիրաբար աշխատելով հասարակական օգտի համար, ազատեցին քաղաքը 5—6 րուբլով պուդը ալիւր գնելու հարկաւորութիւնից։ Աւելորդ չեմ համարում յիշել, որ մի և նոյն պարոնները զանազան երեկոյթների, խնջոյքների մէջ չեն մոռացել և քաղաքիս աղքատ դասակարգին և նրանց օգնելու համար իրանց մէջ հանգանակութիւններ են արել և եթէ ոչ բոլորին, գոնէ սաստիկ չքաւորներին պահելու։

Այսպիսի մի սարսափելի դասից գոնէ օգուտ քաղէին մեր քաղաքացիք կամ գիւղացիք, որոնց համար հեռատեսութիւնը և չափաւորութիւնը (экономія) գոյութիւն չեն ունեցել, նոքա սև օրվայ համար կոպէկ չեն պահել, (բացառութիւններ ի հարկէ կան, բայց խօսքս մեծամասնութեան վրա է), այլ անխնայ կերպով և շռայլաբար վատնել են այսօրվայ ունեցածները, բոլորովին չը հոգալով միւս օրվայ համար....

Ո՞ւր են պատերազմի միջոցին դիզած մանէթները, ոսկիները.—չը կան, որովհետև շատ քչերը միայն պահեցին. իսկ միւսները նոյնպիսի հեշտութեամբ վատնեցին նրանց, ինչպէս ձեռք էին բերել։ Այն ժամանակվայ անկարգ արբեցողութիւնների, փայտոնների մէջ դավուլ զուռնով փողոցներ չափողների ստուերն անգամ չէ մնացել։

Ախալքալաքին սահմանակից նորանուաճ երկրների՝ Արդահանի և Չլտրի նահանգների բնակիչները պատրաստվում են բոլորովին գաղթել Տաճկաստան։

Այդ պատճառով նոքա բոլորովին ցանում չեն իրանց դաշտերը (մասամբ հայ գիւղացիներին են յանձնում կիսուակէս ցանելու)։

Արդեօք մոլեռանդութիւնն է նոցա գաղթելու շարժառիթը, թէ զանազան թիւրք ազէնտներ գրգռում են ժողովրդին այդպէս վարվելու. կարծեմ որ վերջին կարծիքը ևս անհիմն չէ։ Անցեալ օր այդ գաղթողներից մինի հետ ունեցանք այսպիսի խօսակցութիւն։

—Ի՞նչու համար դուք կամենում էք գաղթել այստեղերից—հարցնում եմ ես—Ռուսների մէջ մնալ չենք կարող, նոքա մեզանից զինուոր կառնեն, իսկ մենք չենք ցանկանում գեավուրին ծառայել, նոքա մեր կիները կանբարոյականացնեն, գլխէ կը հանեն—պատասխանում է խօսակիցս։

—Բայց չէ՞ որ մենք ևս ռուսների հպատակ ենք, բայց մեզ հետ ոչինչ այդպիսի բան չէ պատահում։

—Չը գիտեմ, ասումեն։ Այդ «ասումները» չը կարողացայ տեղեկանալ թէ ո՛վ է ասում։

—Բայց միթէ չէք լսած—կրկին հարցնում եմ ես—որ փոքր Ասիայում ներկայումս սով է տիրում և դուք ևս կարող էք զոհ գնալ այդ սովին։ —Ինչ կուզէ լինի, այնու ամենայնիւ մենք վճռել ենք գաղթել։ Նոքա բոլորովին ցաւում չեն, որ իրանց հայրենի հողը կը թողնեն, կարծես նրանց զբաղեցնում չեն գաղթականութեան դժուարութիւններն ու սարսափելի հետեանքները, որոնք գաղթող ժողովրդին հետևում են։ Մի ժողովուրդ, որ ծնվել ու սնվել է տաճիկ կառավարութեան դանդաղ, և թոյլ տիրապետութեան տակ, մի երկրում, որտեղ յափշտակութիւնները, սպանութիւնները առօրեայ երևոյթներ են, որտեղ քրիստոնէի վրա նայում են իբրև մի անարժան էակի, իբրև մահմետականութեան թշնամու վրա, այդպիսի մի երկրում ծնված մոլեռանդ տաճիկը չէ կարող համակրել ռուս տիրապետութեան կարգ ու կանոններին։ Բայց ինչ և իցէ նոցա գաղթելը մի մեծ հարուած է մեր կողմի թէ առևտրականութեանը և թէ երկրագործութեանը։

Չենք կարող չը շնորհաւորել այն կարգադրութիւնը, որով մեր տեղական կառավարութիւնը առաջարկել է հայ գիւղացիներին ներկայ տարում կառավարութիւնից ստացված ցորենով սերմանել և մշակել Ղարսի նահանգի արտերը։

Ներկայ տարվայ թանգութիւնից յառաջացած առևտրականութեան և արդիւնաբերութեան կրիզիսը վատ կերպով ներգործեց ժողովրդի բարոյականութեան վրա։

Մարտի վերջերին օր ցերեկով այստեղ մի տուն մտան և 600 րուբլու չափ ոսկեղէն զարդեր յափշտակելով հեռացան։ Այդպիսի մի յանդուգն գողութիւն առաջին անգամն է Ախալքալաքում։

Քաղաքային ուսումնարանի համար քաղաքային գումարից որոշվեցաւ գործ դնել 12,000 ր.։ Նմանապէս գաւառապետի օգնական պ. Հազարապետեանցի աշխատութեամբ մեր գաւառի գիւղերում հիմնվելու են մի դասատնեան գիւղական ուսումնարաններ։

Բայց մի ոչ պակաս հարկաւորութիւն կայ թէ մեր գաւառի և թէ քաղաքի համար, որի մասին քանիցս անգամ յիշել եմ նախորդ նամակներումս, այսինքն քաղաքային բժիշկ ունենալը։

Մեր գաւառական բժիշկը տարվայ մեծ մասը անց է կացնում Ռուսաստանում և գաւառը մընում է բաղդի հարուածներին ենթակայ։ Անցեալ տարվայ նամակներից յետոյ, որոնց մէջ նկարագրվեցաւ պարոնի արձակուրդ գնալը, նա նեղացած այդ նամակների գրուածքներից, ուղղակի յայտնեց մեր քաղաքացիներին, որ նոքա յոյս չը պէտք է ունենան գաւառական բժշկի վրա, այլ թող քաղաքային բժիշկ հրաւիրեն իրանց համար։ Միթէ մեր քաղաքացիք բժշկից աւելի հարկաւոր են համարում քաղաքային այգին, որը այժմ շինվում է։ Միթէ բաւական չեն այն զոհերը, որոնք իրանց անզգուշութենից յառաջանում են, որ կամենում են նրանց թիւը աւելի ևս շատացնել։ Միթէ, պ.պ. քաղաքակիցներ, ամեն բան ձեզ պէտք է գաւառապետը առաջարկէ որ դուք կատարէք։ Իսկ ինչ որ թղթակցութիւնների մէջ ակնարկութիւններ են լինում այդ բաների մասին, դուք ոչինչ չէք զգում, ձեր մի ականջից մտնում, միւսից դուրս է գալիս։ Եթէ ձեր օգուտը հասկանում էք, գործեցէք, հետևեցէք լրագրների մէջ տպված ձեզ օգտաւէտ խորհուրդներին. լրագիրը և նրա թղթակիցները միայն ձեր օգուտն են մտածում։ Ուրեմն գործեցէք։ Ամեն մի յապաղում կարող է տխուր հետեանքներ ունենալ։ Առ այժմ այսքան։

***

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Ապրիլ 15

Ընդունեցէք, խնդրում եմ, այս չնչին գումարը, որ հաւաքելով իմ շրջանում, ուղարկում եմ ձեզ, յօգուտ մեր սովատանջ համազգիների վանի և նորա շրջակայքում։ Ցաւալի է որ այդպիսի շնորհաբերութիւն չէ կարող արտայայտել այն խորին կարեկցութիւնը, որպիսին զգում է իր ազգը և հայրենիքը ջերմ սիրող հայուհու սիրտը, բայց նորա գործունէութեան ասպարէզը նեղ ու չափաւորված է։ Բարեհաճեցէք, յարգոյ խմբագիր, «Մշակի» համարներից մինի մէջ տպագրել նուիրատուների անունները։

Մագդաղինէ Ֆարրիկանթեանց 5 րուբլ, Աննա Ֆարրիկանթեանց 10 ր., Մելքոմ Ֆարրիկանթեանց 3 ր., Կատարինէ Մարտիրոսեանց 4 ր., Ց. Ֆարրիկանթեանց 1 ր., Պետրոս Ֆարրիկանթեանց 1 ր. Հռիփսիմէ Աւէտիսեան Դաղաչեանց 2 ր., Գայանէ Դաղաչեանց 30 կ., Եղիսաբէթ Դաղաչեանց 1 ր., Ալէքսանդր Դաղաչեանց 1 ր., Խաչատուր Դաղաչեանց 1—50 կ., Եղիսաբէթ Քուլգեանց 1 ր., Մարիամ Արզանդուլեանց 2 ր., Սոֆիա Ախվերդովեանց 1 ր., Գէորգ Ֆարրիկանթեանց 10 ր., Խրիստափոր Ֆարրիկանթեանց 5 ր., Պետրոս Ֆրանգուլեանց 10 ր., Կարապետ Գէնժէեանց 1 ր., Անյայտ ոմն 3 ր., Աբէլ Չիրիկեանց 10 ր., Անյայտ ոմն 7 ր., Անյայտ ոմն 20 կ., Անյայտ ոմն 1 ր., 'Ի յիշատակ հանգուցեալ Մարգարիտի Ֆարրիկանթեանց տուեց Նիկիտ Ֆարրիկանթեանց 3 ր., Մարիամ Ֆարրիկանթեանց 3 ր.։ Ընդամենը 87 րուբլ։

Օր. Մարիամ Ֆարրիկանթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ալէքսանդրապօլ, 29 յունիսի

«Մշակի» 86 համարում օր. Եղիսաբէթ Ալիխանեանի արդարացի նկատողութեան առթիւ, այն միտքն եմ յայտնել, թէ լաւ կը լինէր որ իւրաքանչիւր հայ թարգմանիչ վաղօրօք յայտնէր լըրագրի միջոցաւ, թէ ինչ գրքի թարգմանութեանն է ձեռք զարկում, որպէս զի մի և նոյն գիրքը ուրիշներն էլ չը թարգմանեն, որը իզուր միայն ժամանակի կորուստ կը լինէր։

Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, իմ սուրբ պարտականութիւնս եմ համարում յայտնել հրապարակաւ, որ արդէն թարգմանել աւարտել եմ անգլիերէնի ռուսական թարգմանութիւնից հետեւեալ գիրքը. «Մտաւոր, ֆիզիքական և բարոյական ինքնակրթութեան մասին» (խորհուրդներ այն երիտասարդներին, որոնք կեանքի ասպարէզը մտնելով՝ ցանկանում են կանոնաւորապէս պատրաստվել ուսումնական և հասարակական գործունէութեան համար.) հեղ. Ջօն Ստիւարտ Բլէկիի, Էդինբուրգի համալսարանի յունարէն լեզուի և գրականութեան պրոֆէսսորի։ Գիրքը բոլորովին պատրաստ է տըպագրութեան համար և եթէ հանգամանքները ներեն, յուլիսի վերջերին ներկայ 1880 ամի անշուշտ լոյս կը տեսնի։

Գրիգոր Շահբուդաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի, յունիսի 5-ին, հեռագրով ուղարկեցինք Կ. Պօլսի Կիւլպէնկեանի տան միջոցով յօգուտ Հայաստանի սովեալների 2000 րուբլ։ Ուրեմն փետրվար ամսից սկսած, այսինքն չորս ամսվայ ընթացքում «Մշակը» ուղարկեց յօգուտ Հայաստանի սովատանջների ընդամենը 30,000 րուբլ։

—

Ամսիս 2-ին, առաւօտեան, ԹԻՖԼԻՍԻ Սուրբ Սարգիս եկեղեցու առջև գտան մի նորածին երեխայ, մի աղջիկ, որի ծոցում գրված էր մի թուղթ հետեւեալ գրութեամբ. «Ես լուսաւորչական հայ զաւակ եմ, խնդրեմ ինձ հայ մկրտէք»։ Մանուկին տարան պօլիցիա, և այնտեղից յանձնեցին մի հայ կնոջ, մկրտել տալու համար։

—

Թիֆլիսաբնակ պ. Դաւիթ Թամամշեանից ստացանք յօգուտ վանի սովատանջների 3 րուբլ 30 կոպէկ։

—

Երեքշաբթի, յունիսի 3-ին և հինգշաբթի յունիսի 5-ին յայտնի երաժիշտ, ջութակի վրա ածող պ. Բառւէր, մասնակցութեամբ պ. Գրիգորօվիչու, տուեց երկու կոնցերտ Արծրունու թատրոնում։ Պ. Բառւէրի տաղանդը արդէն այնքան յայտնի է, որ մենք աւելորդ ենք համարում նրա խաղի մասին երկար ու բարակ խօսել։ Նա զարմանալի ներդաշնակ ձայներ է հանում իր գործիքից։ Պ. Գրիգորօվիչի իր կարդացած ոտանաւորները լաւ է կարդում և այդ ոտանաւորներից մի քանիսներ, մանաւանդ, խոր տպաւորութիւն են գործում լըսողի վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՕՇԷՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Վիէննայի „Politische Corresp". լրագրի Փարիզի թղթակիցը յունիսի 1–ից գրում է հետեւեալը:

«Նրանք որոնք ասում են, թէ Գօշէնին այստեղ (Փարիզում) շատ լաւ չեն ընդունել, սխալվում են: Անգլիական կառավարութիւնը պատուիրել էր Գօշէնին առանձնապէս խորհրդակցել Ֆրանսիական կառավարութեան հետ Արևելեան հարցի մասին, և այդ բանը շատ լաւ տպաւորութիւն գործեց Ֆրանսիական դիպլօմատների վրա: Պ. Գօշէնը դեռ ևս պաշտօնապէս ոչ մէկ առաջարկութիւն չէ արել, բայց այն, ինչ որ նա ապացուցանում էր մանաւոր խօսակցութիւնների մէջ Ֆրէյսինէին, այնքան համապատասխան դարձաւ ժամանակի հանգամանքների հետ, որ Ֆրանսիական մինիստր նախագահը առանց երկար մտածելու համաձայնութիւն տուեց նրա գաղափարին: Այն ժամանակ միայն գործը յայտնի ձև ստացաւ և կոնֆերէնցիայի նախագիծը, որ պէտք է հաւաքվէր Բերլինում կամ Կ. Պօլսում, յղացաւ նրանց մտքում: Կոնֆերէնցիայի ժողովվելու օրը դեռ ևս չէ նշանակված: Ֆրանսիան առաջարկեց յունիսի 15–ը, իսկ Ռուսաստանը—յուլիսի սկզբները: Կոնֆերէնցիայի պրօգրամման առաջվայ ենթադրածից աւելի կը համառօտվի: Շատ պետութիւններ, որոնց թւում և Ֆրանսիան, ցանկանում են Բերլինի դաշնագրում նախագծված սահմաններից դուրս չը գնալ: Կոնֆերէնցիան կը զբաղվի յունական հարցով, բայց կարող է պատահել, որ Իտալիան և Ռուսաստանը կը բարձրացնեն Չէրնոգօրիայի հարցը, բայց սա արդէն կը կատարվի, այսպէս ասած, պրօգրամից դուրս: Փարիզի և Լօնդօնի մէջ արևելեան քաղաքականութեան այլ կէտերի վրա ևս համաձայնութիւն կայացաւ: Հաւաստացնում են, որ պ. Գօշէնը Լօրդ Գրէնվիլից առանձին պատուէրներ ևս ստացել է համաձայնութեամբ գործելու Կ. Պօլսի Ֆրանսիական ներկայացուցիչ Տիսօի հետ: Այս պատճառով Ֆրանսիան և Անգլիան կը ստիպեն Բ. Դրան մի միջազգային յանձնաժողով կազմել, որի գործը կը լինի Թիւրքաց ադմինիստրացիայի վերանորոգութիւնը, նոյնպէս և ֆինանսական կառավարութիւնը: Հայաստանում նոյնպէս անյապաղ կը պարապվեն և յետոյ կը պահանջեն, որ հաւաքվի թիւրքաց պարլամենտը:»